

ՀՈԳԵԽՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Տ. ՂԵԻՌՆԴ ՔԱՆԱՆԱ ՄԱՅԻՆԱՆ

ՆՈՐ ՄԱՐՏԱՆՈՐԱՎԵՐՆԵՐ*

«Որովհետև շաբեր, - որոնց մասին շաբ անգամ ասել եմ ձեզ
և այժմ էլ լսելով եմ ասում, - ընթանում են որպես
թշնամիներ Քրիստոսի խաչի»:
Փիլիպ. Գ. 18

Ընդհանրապես Ի. դարում մեծ տարածում է գտնում այն սկզբունքը, որը հռչակում է դերերմինիզմի բացարձակությունը, ժխտելով այն ամենը, ինչ խաչընդդրում է դրան. «Այն ամենը, ինչ սահմանափակում է իմ ազատությունը ընդունելի չէ: Ես ինչ ուզեմս կանեմ»:
Անշուշտ այդ ամենին խաչընդդրող մեկ բան կա. հեղինակության կամ հեղինակությունների գոյությունը, որոնք իրենց գոյությամբ արգելակում են «ազատությունը»: Ներկայացրեմ ամեն կերպ, ամեն գնով պետք է հրաժարվել բոլոր հեղինակություններից: Նենց այս սկզբունքն են իրականացնում այսօր ժամանակակից գաղազան կրոնական, աղանդավորական շարժումները՝ Նայասարանում, և ոչ միայն մեզանում: Ես րեղի է ունենում «յուրօրինակ», շախմատային լեզվով ասած՝ փոխաբերություն. հեղինակություններին մերժելով կամ պարմության գիրկն ուղարկելով «հեղինակություն» են դառնում հենց իրենք, իրենց անձը, իրենց եսը: Այսինքն արարքին հեղինակությունը վերածվում է ներքին հեղինակության: Այդ նշանակում է, որ թեոցենտրիզմը վերածվում է էգոցենտրիզմի՝ եսակենտրոնության ամենալայն իմաստով. ոչ միայն գաղափարներն ու փեսություններն են պարզվում այդ անհատի, շարժման, կազմակերպության շուրջ, այլ՝ ողջ Տիեզերքը: Անհատը, շարժումը, կազմակերպությունը վերածվում է «ճշմարտության միակ կրողի», ինքն իրեն դնելով ամեն ինչի կենտրոնում:

Այդ առումով այսօր մեր աչքի առաջ հարվածի փակ են դրված հեթանոսական հեղինակությունները.

Աստվածաշունչ մարդանը, Քրիստոսը՝ որպես աշխարհի լույս, Նրա անձը, Եկեղեցին, եկեղեցական ավանդությունը, քրիստոնեությունն ընդհանրապես, քրիստոնեական հավատը, բարոյականությունը և ամեն ինչ, որ կապ ունի քրիստոնեական ավանդական պարկերացումների հետ:

* Տե՛ս «Էջմիածին», 2012, Ա, էջ 112

2 Ներառյալ Ե. Ս. 5-ում գրեթե նույն միտքն է արտահայտված:

Ա. Աստվածաշունչ մաքյան

Ահա մի քանի ժամանակակից տեսակետներ, որոնցում աստիճանաբար փորձ է արվում նսեմացնել Աստվածաշունչի հեղինակությունը:

ա. Աստվածաշունչ մաքյանը շատ ու շատ այլ գրքերի նման իմաստուն մտքեր պարունակող գիրք է: Այն ոչ թե Աստծու խոսքն է, այլ բարոյական արժեքներ պարունակող լավագույն գրքերից մեկն է, ինչպես օրինակ Բիագավար-գիտան կրիշնայականների համար, մունականների համար՝ «աստվածային սկզբունքը», մորմոնների համար՝ Մորմոնի գիրքը եւ այլն: Պարզ է, որ այս տեսակետի համաձայն Աստվածաշունչ մաքյանի՝ Աստծու խոսք լինելը ինքնըստինքյան ավելորդ է դառնում:

բ. Եթե անգամ Աստվածաշունչ մաքյանը Աստծու խոսքն է, այն կարարյալ չէ, այն պարունակում է սխալներ, ուստի հասկանալու համար անհրաժեշտ են այլ՝ ավելի «հոգևոր» գրքեր: Այս տեսակետն են պաշտպանում մասնավորապես մորմոնները, Եհովայի վկաները: Չնայած վերջիններս ամենուրեք հայտարարում են, որ Աստվածաշունչ մաքյանը իրենց համար անգերազանցելի հեղինակություն է, սակայն դրանք միայն խոսքեր են³: Մորմոնի գիրքն ուղղակի կրում է «Նոր վկայություններ Նիաուս Քրիստոսի մասին» վերնագիրը, այսինքն ուզում են ասել, թե եկել է լրացնելու Նոր Կտակարանը:

գ. Աստվածաշունչ մաքյանի վերաբերյալ մի երրորդ տեսակետ եւս կա, համաձայն որի Աստվածաշունչ մաքյանը բացարձակ ճիշտ է, հարյուր առ հարյուր, բայց այդ գիրքը հասկանալ կարելի է միայն իրենց խմբի, կազմակերպության մեջ լինելով: Մյուսների կամ իրենցից դուրս բոլորի համար աստվածաշնչային ճշմարտությունները անհասկանալի են, այդ առումով հայ աղանդավորների շրջանում լայն տարածում ունի՝ «Աստծու խոսքը ձեզ (իմա՝ Նայ Առաքելական Եկեղեցու անդամները) համար փակ է» դարձվածքը⁴:

Այս տեսակետի հետևորդները՝ Եհովայի վկաները, հոգեգալստական զանազան խմբեր, ամենավրանգավորն են, քանի որ Աստվածաշունչի հեղինակությունը կարծես կասկածի տակ չեն դնում, բայց Ս. Գիրքը իրականում հասկանում են այնպես, ինչպես ուզում են, ինչպես իրենց քաղաքում են, կամ ինչպես իրենց հրահանգում են:

Նաճախ հարկ է լինում Աստվածաշունչ մաքյանի ամեն բառի համար պայքարել, ցույց տալ, որ այսօր չես կարող երկու հազար տարի առաջ ապրած հռոմեացի զինվորների վզին փաթաթել ժամանակակից տեսակետները, քննադատել նրանց այն բանի համար, որ չեն արել այն, ինչ կուզեինք մենք այսօր: Սա նույն բանն է, թե հռոմեացի զինվորներին կարե-

3 Նրանց հիմնադիր Ռասսելը գրում է. «Իմ վեց հարուրները՝ «Գրությունների ուսումնասիրությունը», գործնական Աստվածաշունչ է, կազմված ըստ թեմաների, որոնցից ամեն մեկը հապավում է Աստվածաշնչային տեքստերով: Այն կարելի անվանել թեմատիկ Աստվածաշունչ: Այլ խոսքով դրանք ոչ միայն Աստվածաշունչի մեկնաբանություններ են, այլ՝ Աստվածաշունչ... Մարդիկ առանց իմ գրքի ի վիճակի չեն Աստվածաշունչը հասկանալ: Եթե նույնիսկ մարդ կարդացել է իմ «Գրությունների ուսումնասիրությունը» փաստ փարի անընդհատ, եւ եթե նա սովորել է հասկանալ Աստվածաշունչը իրապես, եւ եթե նա մի կողմ դնի իմ «Գրությունների ուսումնասիրությունը», եւ կարդա միայն Աստվածաշունչը, ապա, ինչպես ցույց է տալիս փորձը, նա երկու տարվա ընթացքում կհայտնվի կարարյալ խավարի մեջ: Մյուս կողմից, եթե նա կարդա միայն «Գրությունների ուսումնասիրությունը», եւ այն հղումները, որոնք տրված են գրքում, ապա եթե անգամ ջրացի Աստվածաշունչը, նա երկու տարի հետո կհայտնվի լույսի մեջ, քանի որ նա կտեսնի Գրությունների լույսը» («Դիտարան», 15 սեպտ. 1910):

4 Օգոստինոս Երանելիի հայերի Extra ecclesiam nulla salus -ի աղավաղված ձևն է հիշեցնում:

լի է նկարել Կալաշնիկով ինքնաձիգը ձեռքին՝ սիգարը բերանին: Թվում է, թե անխմաստ է նման մոտեցումների դեմ պայքարել, բայց նկարի ունենալով այն, որ նման գաղափարներ ու փեսակներ, մանավանդ՝ սուրբգրային, ամեն օր գնալով թաքնված ձևով մաքուր մնում են մեզ, կարծում ենք որ կարելի է այդ խնդիրը ներկայացնել որպես ժամանակակից մարտահրավերների սկիզբ:

Երբ մենք բանակով Ղայաստան ներմուծվեց Եհովայի վկաների պատրաստած աստվածաշունչը կամ ինչպես իրենք են ասում՝ երբայական և հունարեն գրությունները, Նոր աշխարհի թարգմանությունը, նորկարարական «խաչ, խաչել» բառերը թարգմանվել էին «ցից, ցից հանել» բառերով: Այսինքն, համաձայն նրանց թարգմանության, մեր Տիրոջ՝ Նիսուս Բրիսպոսին գամել են սյան՝ ցցի վրա:

ԽԱՇԻ ԶԵԻԻ ԽՆԴԻՐԸ

Թե ինչ նշանակություն ունի քրիստոնյաների համար Խաչը, հասկանալի է. ավելի ճիշտ՝ Խաչը հիմքն է այն շենքի, որի վրա կառուցված է եկեղեցին: Ուղղափառ եկեղեցիները Խաչը նույնացնում են Բրիսպոսի հետ, դրանով իսկ ձևավորելով վերաբերմունք Խաչի հանդեպ: Թվում է, թե այս հարցը այնքան պարզ է ու հասկանալի, որ երբեք վեճի առարկա չի կարող դառնալ: Յավոք, այսօր արդեն այդ մեկ բառը՝ Խաչը, որ մարդկության փրկությունը դարձավ, ինքն է պաշտպանության կարիք գգում: Այդ պարծառով կվորձենք ավելի մանրամասն անդրադառնալ, արդեն մեր ժամանակների «Խաչվերացի»՝ այսպես կոչված «Խաչը գերությունից վերադարձնելու» և իր արժանի փեղում կանգնեցնելու խնդրին: Մասնավորաբար Եհովայի վկաներին հետևողները, լսելով նրանց քարոզները, աստիճանաբար օտարվում են քրիստոնեությունից, քրիստոնեական սրբությունները նրա համար վերածվում են նախարինքի, անարժեք են դառնում⁵: Անշուշտ այդ կատարվում է միպոմնավոր կերպով. ոչ միայն Խաչ բառը, այլ ամեն բառ որ եկեղեցի է հիշեցնում փոխում են: Այսպես՝ եկեղեցի բառը նրանց մոտ «գործածությունից» դուրս է գալիս, փոխարինվում է՝ «թագավորության սրահ»-ով, Աստվածաշնչի Նին և Նոր Կտակարանները փոխարինվում են «երբայերեն և հունարեն գրություններ»-ով, Խաչի նշանը համարում են հեթանոսական⁶ և այլն⁷:

Այս կարգի պարկերացումները նրանց մոտ միանգամից չեն ձևավորվել, այլ աստիճանաբար: Եհովայի վկաների շարժման հիմնադրումից մինչև նրանց «լուսավորվելը» տասնամյակներ անցան: 1930 թվականից առաջ «Դիպարանի» հրապարակումներում անգամ Խաչի նշանը ավանդական փեսքով է ներկայացված: 1931 թվականի հոկտեմբեր 15-ի համարից սկսած «Դիպարանը» իր էջերում Խաչի նշանը ներկայացնում է ուղիղ գերանի՝ ցցի ձևով, տալով հետևյալ բացատրությունը.

«Նիսուսը խաչվել է ոչ թե փայտե խաչի վրա, որը ներկայացված է բազում նկարներում, պարկերներում, որոնք մարդիկ ներկայացնում են ցուցադրելու համար, - այլ Նիսուս խաչվել

5 Նիսուսը այս է պարծառը, երբ Եհովայի վկան դարձի է գալիս՝ հիասթափվելով նրանցից, երկար տարիներ չի կարողանում եկեղեցի մտնել, փեղի են տալիս նրանց քարոզների հետևանքները:

6 Զարմանալի է, թե հեթանոս հռոմեացիների մահապատժի գործիք հանդիսացող խաչի «ոչ հեթանոսական» ո՞րն է - nonsense:

7 «Դիպարան», 1975, էջ 395:

է գամվելով գերանին՝ ուղղահայաց ցցին»⁸: «Նրա ձեռքերը մեկը մյուսի վրա դնելով գլխավերևում՝ մեխեցին մեկ մեխով, իսկ մյուս մեխով էլ ոտքերը գամեցին ցցի վրա: Ներս ուղղահայաց կանգնեցրին ու մարմինը կախվեց այդ երկու մեխից»⁹:

Եհովայի վկաները պնդում են, թե Աստվածաշունչը հենց այդպես է նկարագրում խաչելությունը, որն էլ, իբր, համապատասխանում է հունարեն բնագրին:

«Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Տիտուս խաչվել է ոչ թե սովորական խաչի վրա, այլ ցցի՝ գերանի կամ սրավորու-ի: Այս հունարեն բառը, որ օգտագործում է Մարթ. 27.40-ում, առաջին հերթին նշանակում է սովորական ուղղահայաց փայտ՝ ցից, որն օգտագործվում է շենքերի հիմքերում: Այսպիսով խաչը երբեք չի եղել ճշմարիտ քրիստոնեության նշան»¹⁰:

Վերջերս Եհովայի վկաները հայերեն թարգմանեցին իրենց աստվածաշունչը՝ Նոր աշխարհի թարգմանությունը, հավելվածներով և բառարանով հանդերձ, ուր խաչին նվիրված «ներբողում» գրված է.

«Ա. Տիտուսին կախեցին ցցից՝ որպես նախադիմք

Տիտուսին կախեցին ցցից կամ ծառից - Գրծ. 5.30, 10.39, Գղ. 3.13

Քրիստոնյաները պետք է կրեն փանջանքի ցիցը՝ որպես նախադիմք - Մթ. 10.38, Ղկ. 9.23

Բ. Խաչին չպետք է երկրպագել

Տիտուսի փանջանքի ցիցը ցուցադրելը նախադիմք է - Եբ. 6.6, Մթ. 27.41, 42

Երկրպագության մեջ խաչ գործածելը կոտակաշարություն է - Ելք 20.4, 5, Եբ. 10.3-5

Տիտուսն այլևս ցցի վրա չէ, նա ոգի է - 1Տմ 3.16, 1 Պր. 3.18»¹¹:

ԽԱՉ, ԹԵ՛ ՑԻՑ՝ ԱՆԱՐԳ-ԱՆՔԻ, ՏԱՆՋԱՆՔԻ ՍՅՈՒՆ

Տունարեն ժեսթոս բառը շար իմաստներ ունի. փայտ, չորսու, գերան, սյուն, խաչ և այլն: Ընդ որում հունարեն այդ բառը յուրօրինակ կենսագրություն ունի. հին հույները այդ բառը նույնացնում էին սյուն, փայտ և նման բառերի հետ (Մարթ. ԻԷ. 32, 40, 42, Փիլ. Բ. 8, Եփ. Բ. 16, Եբ. ԺԲ. 2, Ա Կորնթ. Ա. 17, 18, Գաղ. Ե. 11, Զ. 12, 14): Այդ բառին հոմանիշ է չնձոն բառը, որ թարգմանվում է նաև փայտ, գերան (Ա Կորնթ. Գ. 12, Յայր. ԺԸ. 12, Գործ. ԺԶ. 24, Մարթ. ԻԶ. 47, 55, Գործ. Ե. 30, Ժ. 39, ԺԳ. 29, Ղուկ. ԻԳ. 31, Յայր. Բ. 7)¹²: Նոսմեական կայսրության հզորացման հետ, հույները ծանոթացան մահապարժի այդ հոմանիշ գործիքի՝ խաչի հետ, որն էլ շարունակեցին անվանել այդ նույն ժեսթոս բառով, իսկ փայտ, գերան և նմանապիպ բառերը՝ չնձոն բառով, թեև չնձոն բառը մնաց նաև հոմանիշ խաչ բառի: Տիտուսի ժամանակներում հույներն արդեն ժեսթոս բառով միայն խաչն էին պատկերացնում: Նոմերոսի և հույն դասականների ժամանակ ժեսթոս բառի փայտ,

8 «Տարեգիրք Եհովայի վկաների», 1975, էջ 148-149:

9 «Դիպարան», 1 ապրիլ, 1965, էջ 211:

10 «Դիպարան», 15 նոյեմբեր, 1992, էջ 7:

11 «Աստվածաշունչ, Նոր աշխարհի թարգմանություն», 2010, էջ 2033:

12 Տիւ, օրինակ, G. W. H. Lampe, A patristic greek lexikon, Oxford բառարանի համապատասխան հոդվածները կամ Greek-english lexikon to the New Testament, T. S. Green, London, 1976; A. Д. Вайсман, Греческо-русский словарь, М., 1991, էջ 1150:

գերան իմաստը Կրեդալիտիս Նոմեական կայսրության ժամանակները, ինչպես անում են Եհովայի վկաները, անիմաստ է և սխալ: Նույն դասականների ժամանակ նրանք Նոմեական սարսափ մահապարծի գործիքի մասին պարկերացում անգամ չէին կարող ունենալ:

Օրինակ հունարեն *δημαγωγία/δημαγωγός* բառը մինչև Ք. ա. Ե. դարը կիրառվել է «Ժողովրդի ղեկավար, առաջնորդ» իմաստով, հետագայում, սրանալով բացասական երանգ, օգտագործվել է «խաբել, մոլորեցնել, սևեփական նպատակին ծառայեցնելու մեթոդ» իմաստով: Եւ կարելի է պարկերացնել, թե ինչ կարացվի, եթե ավերարանական ժամանակների հունարենում հանդիպող այդ բառը թարգմանվի հին իմաստով:

Նման «կենսագրական» փոփոխությունների¹³ կարելի է հանդիպել ցանակացած լեզվում: Նայերենում, օրինակ, «Մարդը մահկանացու է» նախադասությունը հասկանալի է ժամանակակից հայի համար, մինչդեռ Մաշտոցի ժամանակակիցն այդ նախադասությունը անիմաստ կհամարեր¹⁴:

Նկրտաբար պետք է զգույշ լինել և ժամանակի մեջ ճամբորդել՝ բառը Կրեդալիտիս մի շրջանից մեկ այլ շրջան, միշտ չէ որ կարող է ճիշտ լինել: Բնական է, պետք է նկատի ունենալ առաջին հերթին ավյալ ժամանակում եղած պարկերացումները, այս պարագային՝ իսա-ՏԵՄՐՈՍ ԲԱՌԻ ՆՂԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԴ ԻՍԿ ԺԱՄԱՆԱԿԱԶՋԱՆՈՒՄ:

1. Նովհաննեսի Ավերարանը պարմում է, որ առաքյալները հավաքված էին և դռները փակել էին, երբ Յիսուս հայտնվում է իրենց: Թովմաս առաքյալը այնպեղ չի լինում: Երբ այդ մասին պարմում են Թովմասին, նա ասում է. «Եթե չտեսնեմ Նրա ձեռքերի վրա **մեխերի** քերը և իմ մարմնի **մեխերի** քերը չդնեմ... չեմ հավարա» (Յովհ. Ի. 25):

Այսպեղ ուշադրություն պիտի դարձնել «մեխ» բառի թվի վրա. այն հոգնակի է: Այսինքն, խոսքը մեկ մեխի մասին չի եղել, այսպեղ ավերարանիչը, ի միջի այլոց նա վկա է եղել իսա-ՏԵՄՐՈՍ ԲԱՌԻ ՆՂԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, օգտագործում է մեխ բառը հոգնակի թվով, քանի որ հակառակ դեպքում՝ ցցի վրա գամելու պարագայում, նա կօգտագործեր մեխ բառը եզակի թվով¹⁵:

2. Ավելի հեղաքրքրական է Նովհաննեսի մեկ այլ վկայություն, երբ հարուցյալ Տերն ասում է Պերոսին. «Ճմարիտ, ճմարիտ եմ ասում քեզ, որ մինչ դու երկրասարդ էիր, ինքդ էիր գոյիդ կապում և գնում էիր՝ ուր և կամենում էիր, սակայն երբ ծերանաս, ձեռքերդ **վեր կը բարձրացնես**, և ուրիշները քեզ գոյի կը կապեն ու կը քանեն՝ ուր չես կամենա» (Յովհ. ԻԱ. 18-19): Նունարենում ընդգծված բայն է *ἐκτενέις*, որ թարգմանվում է «քարածել, երկարել»: Այդ ձեռն օգտագործված է Մարթ. Ը. 3-ում, երբ «Ձգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս և ասէ, Կամիմ, սրբեաց»: Շապ այլ քերերում եւս ավերարանիչներն օգտագործում են բայի նման ձեռն, «ձեռքերը երկարել, ձգել, քարածել» իմաստով (Ղուկ. ԻԲ. 53, Գործք Դ. 30, ԻԷ. 30 և այլն): Բոլոր այս քերերում *ἐκτενέις* բայը միանշանակորեն «քարածել, երկարել» իմաստն է արքանայրում: Իսկ թե ինչպես պիտի մահվան դարապարքվեր Պերոսը,

13 Լեզվաբանության մեջ այդ երևույթը կոչվում է իմաստափոխություն, լեզվաբանության այդ բաժինն էլ - semantics, semasiology:

14 Նում *մարդ* բառը նշանակաւել է *մահկանացու*, և այդ նախադասությունը կհասկացվեր այսպես՝ «մահկանացուն մահկանացու է»:

15 Տե՛ս նաեւ **Рон Родес**, Вразрез со Священным Писанием, Минск, Библейская лига, 1998, էջ 118-122:

հայրնի է՝ խաչվելով՝ ձեռքերը տարածելով, ինչպես Տիտուս, միայն հակառակ ուղղությամբ՝ գլխիվայր¹⁶:

Միջնադարում Հայ Եկեղեցու հայրերն էլ խաչելությանը նվիրել են բազմաթիվ տոներ, ուր գովերգել են Խաչյալին, խաչելության ավանդական ձեռն աչքի առաջ ունենալով: Մասնավորաբար Ս. Ներսես Շնորհալու հայրնի «Տարածեալը», որը ներկայացնում է Տիտուսի խաչելությունը.

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց	Ձեռքերի տեղ ձեռքերը տարածեց,
Ուրք ընդ ուրից ընթանեալց,	Ընթացող ուրքերի տեղ՝ ուրքերը,
Փայտ ընդ փայտի դառն պտղոյ	Դառն պտուղի փայտի տեղ՝ փայտը,
Կեանք ընդ մահու փոխարկելով:	Մահը կյանքի փոխարկելով:

Այնուհայր է, որ Շնորհալին աչքի առաջ ունեցել է խաչելության՝ ավանդական պատկերը:

Եւ եթե պարկերացնենք Խաչելությունը ոչ ավանդական ձեռով, այսինքն, եթե Տիտուս իր ձեռքերը աջ ու ձախ տարածելու փոխարեն ձեռքերը գլխավերեւ բարձրացնէր, ապա ոչ միայն վերը նշված բոլոր համարներում կստանայինք անիմաստ ու անկապ պարկերներ, այլ քրիստոնեության շար սկզբունքներ կդառնային nonsense:

3. Մարթ. ԻԷ. 37-ում ավերարանիչը գրում է. «Եւ նրա գլխի վերեւը դրեցին հանգապարտության գիրը, թէ՛ սա է Տիտուսը՝ հրեաների թագավորը»:

Եթե Տիտուս խաչվեր Եհովայի վկաների տեսության համաձայն, ապա ավերարանիչը կգրեր՝ «Եւ նրա ձեռքերի վերեւը դրեցին հանգապարտության գիրը...»:

Կարծում ենք, որ սուրբգրային այս համարները բավական են ցույց տալու, որ Տիտուսի Խաչը ավանդական ձև ուներ:

Եհովայի վկաների վերջերս հրապարակած գրքում, ամենուր խաչ ժեստը բառը վերացրել են, փոխարինելով այն ցից, քանջանքի ցից բառով: Բնականաբար հարց է առաջանում, եթե ժեստը փոխարինել են ցից բառով, ապա որտեղից են վերցրել քանջանք բառը, այն բացակայում է բերված համարներում¹⁷:

Հայրաբանական գրականության մեջ եւս երբեք չենք հանդիպում խաչի՝ սյան ձևի նկարագրության, ընդհակառակը, հեղ առաքելական շրջանում ակնարկություններ կան խաչի ձևի՝ ավանդական նկարագրության մասին¹⁸:

Նշենք մի կարևոր փաստարկ եւս. Խնդիրն այն է, որ առաքելական շրջանում հունարեն լեզուն ուներ սյուն = στύλος բառը, եւ եթե ավերարանիչները ուզեցին նկարագրել «սյունաձև» խաչելություն, ապա նրանք չէին օգտագործի ժեստը սյան փոխարեն: Ստորեւ կրեքներ այն համարները, ուր հանդիպում ենք սյուն բառին:

16 Ավանդության համաձայն Ս. Պետրոս առաքյալը մահվան է դատապարտվել Ներոնի հալածանքների ժամանակ՝ խաչելությամբ, միայն հակառակ՝ գլուխը ներքև ուղղված, քանի որ ինքն իրեն արժանի չի համարել իր Տիրոջ նման մեռնել՝ այսինքն նույն ձևով խաչվել:

17 Մարթ. ԻԷ. 26, Մարթ. ԻԷ. 31, Մարթ. ԻԷ. 35, Մարթ. ԼԵ. 40, Յովի. ԺԹ. 16, Յովի. ԺԹ. 41, Ա. Կորնթ. Ա. 22-23, Գաղ. Զ. 12, Գաղ. ԺԲ. 14, Եփ. Բ. 16, Փիլ. Բ. 8, Փիլ. Գ. 18, Կող. Ա. 20:

18 Օրինակ, Բառնաբասի թուղթը, Թ. գլուխ. «Եւ քանի որ խաչը T տառի նման, պետք է ցույց տալ բավական շնորհը ...»: Նավեկենք, որ այս թղթի ժամանակը համարվում է Փրկչական 70-100 թթ.:

Նոր Կրակարանում այն հանդիպում է հերկայալ փեղերում. Տիմ. Գ. 15, Գաղ. Բ. 9, Յայր. Գ. 12, Յայրն. Ժ. 1:

Ա. Տիմ. Գ. 15

στύλος καὶ ἔδραίωμα τῆς ἀληθείας - սյուն և հաստատություն ճշմարտության

Գաղ. Բ. 9

Ἰάκωβος καὶ Κηφᾶς καὶ Ἰωάννης οἱ δοκοῦντες στῦλοι - երբ Հակոբոսը, Կեփասը և Նովհանները, որոնք սյուներ էին համարվում...

Յայր. Գ. 12

Ὁ νικῶν ποιήσω αὐτόν στῦλον ἐν τῷ ναῷ τοῦ θεοῦ μοῦ - ով հաղթի՝ նրան իմ Աստծու փառարին սյուն պիտի դարձնեմ...

Յայրն. Ժ. 1

καὶ οἱ πόδες αὐτοῦ ὡς στῦλοι πυρός - իսկ նրա ոտքերը հրեղեն սյուներին...:

Այս պարզ համեմատությունը ցույց է փայլա, որ առաքյալները սյուն ասելով հասկացել են στύλος և ոչ թե՝ սταυρός: Ավելին. Քրիստոսից երեք դար առաջ ևս սταυρός-ը երբեք սյուն չի նշանակել: Բավական է համեմատել 70-ից թարգմանության մի քանի համարներ:

Ծննդ. ԺԹ. 26

καὶ ἐγένετο στήλη ἄλός - և դարձավ աղե արձան (սյուն):

Ի վերջո, խաչ-մահվան գործիքը, որին հուսարենում քվել են ստաυρός անունը, խորհրդանշել է Հռոմեական կայսրության հզորությունը, և, անկախ նրանից, թե ինչպես են այն պատկերացրել հույները կամ «սյուն, քանդանքի ցից» բառերի հեղինակ փրահեռչակ Ռուփերֆորդը, ավելի կարևոր է մեզ համար, թե ինչպես են պատկերացրել, պատրաստել և կիրառել ... բուն հռոմեացիները:

Խաչի՝ (Crux) ուղղահայաց ձողը հռոմեացիներն անվանում էին Staticulum, իսկ հորիզոնական ձողը՝ Patibulum: Հռոմեացիներն ընդհանրապես Crux հաճախ անվանում էին միայն հորիզոնական ձողը, քանի որ մահապարիժներն արագացնելու համար նրանք ուղղահայաց ձողը միշտ կանգնած էին թողնում անշարժ, և միայն հորիզոնականն էր փոխվում: Խաչվողներն էլ այդ հորիզոնական ձողն էին քանում, մինչև խաչվելու վայրը, այսինքն նրանց խաչում էին Patibulum-ի վրա, ձեռքերը քարածելով աջ և ձախ, հետո բարձրացնում Staticulum-ի վրա: Բոլոր դեպքերում, հռոմեական խաչելությունը երբեք չի ճանաչել միայն ուղղահայաց խաչելություն՝ ցցահանում¹⁹:

Վերջում բերենք մի քանի օրինակ քարբեր հեղինակներից, որոնք հիշում են խաչելությունը՝ ավանդական ձևով:

¹⁹ Հավանցիկ նշենք, որ «ցից հանել» ունի նաև իր իսկական նշանակությունը՝ ցից հանել բառացի իմաստով, երբ մահապարիժն նստեցնում էին ցցի սրած ծայրին և ոչ թե գամում ցցի վրա: Թե ինչո՞ւ են Եռովայի վկաներն այդպիսի փարօրինակ «հայրություն» ստացել, թողնում ենք նրանց խղճին:

Պոլիթիոս պարմիչը, նկարագրելով Կարթագենում վարձկանների ապստամբությունը, հիշատակում է նաև այն մասին, որ նրանց առաջնորդը՝ Սպինդիոսը խաչվել է խաչի վրա²⁰։ Խաչում էին միայն սպրտիկներին, հանցագործներին, որոնք քաղաքացիություն չունեին, ինչպես, օրինակ, Պևրոս առաքյալին խաչեցին, որովհետև հրեա էր և քաղաքացիություն չունեցր, իսկ Պողոս առաքյալին չխաչեցին, այլ գլուխը կտրեցին, քանի որ քաղաքացի էր։ Բայց լինում էին նաև բացառություններ։ Սվետոնիոսը նկարագրում է մի դեպք, երբ Գալբան քաղաքացիություն ունեցողին էլ մահապատժի ենթարկեց խաչելությամբ, բայց վերջին փաստը օգնեց նրան այնքանով, որ Գալբան նրան խաչելի փվեց ամենաբարձր և սպիտակ ներկված խաչի վրա։

«Մի խնամակալի, որ թունավորել էր մի որբուկի, որպեսզի նրանից հետո ժառանգությունը ինքը ստանա, խաչել փվեց, իսկ երբ սա սկսեց դիմել օրենքների օգնությանը, հավաստիացնելով, որ ինքը Հռոմի քաղաքացի է, ապա Գալբան, ասես թեթևացնելու համար նրա պարիժը, կարգադրեց հանուն մի թաթարանքի և պատվի նրան փոխադրել մեկ ուրիշ՝ մնացյալներից ավելի բարձր և սպիտակ ներկված խաչի վրա»²⁰։

Այսպիսին էր Հռոմեական իրականությունը, և բացառվում էր խաչելության որևէ կայացում միայն ԾԾՆՕՏ-ի վրա, ինչքան էլ ցանկանային Եհովայի վկաները, նրանք չէ, որ Ի. դարում պիտի «սովորեցնեին» Ա. դարի հռոմեացիներին, թե ինչպես պետք է խաչել մահապարկներին. սա nonsense է։

Հայրնի են նաև հնագիտական բազաթիվ գրածոներ, որոնք ապացուցում են, որ խաչը խաչ է, ու ոչ թե սյուն։ Բերենք մի օրինակ։

Պաղեստինում նույնպես, Քրիստոսից առաջ, խաչը հայրնի էր որպես մահապատժի գործիք²¹, որոնք հիմնականում ավանդական ձևն ունեին, կամ T և X ձևն ունեին։

Հնագիտական գրածոներն էլ ամենահավասարի տեղեկություններն են տալիս այն մասին, որ խաչն ունի ավանդական ձև, այսինքն՝ T ձևի, կամ X ձևի։ Մասնավորաբար հայրնի է 1968 թ. Գիվար Խա-Միվար լեռան վրա պեղումների արդյունքը, Երուսաղեմի արվարձանում, որտեղ հնագետները պեղեցին T-ձևի խաչված մի մարդու գերեզման²²։

(Շարունակելի)

20 Տե՛ս **Գայոս Սվետոնիոս Տրանքվիոս**, Տասներկու կեսարների կյանքը, Երևան, 1986, էջ 242։

21 Տ. Փլավիոսը պարմում է Բասսե գորավարի մասին, որը հրեաների դեմ իր մի ճակատամարտից հետո «իրամայեց կանգնեցնել խաչ, որպեսզի նրա վրա գամի Էլեագարին (հրեա գերի)...», “И. Флавия Иудейская война”, Минск, 1991, էջ 432։

22 Տե՛ս **Ք. Սանտալ**, Мессия в Новом Завете в свете раввинистических писаний. — СПб.: Библия для всех, 1996, էջ 197։